Ընդհանուր եւ արտաքին կապերի բաժին
N 11490 04 DEC 2019 ժամ 10:25

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

«03» դեկտեմբեր 2019թ. No 3623 - Ա

ԲԵԼԳԻԱԿԱՆ «ԻՊԵՔՍՏՐԱԿՈ ՆՎ» ՎԻԵԿԵՎՈՐՍՏՍԵՍ ՏԵՆՎԵԳ 38, Բ-2220 ՀԵԻՍՏ-ՕՊ-ԴԵՆ-ԲԵՐԳ,ԲԵԼԳԻԱ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ՄՆԳՈՌՈՒ, ՆԻԿԱՐԲԱԶԻԴ, ՄԱԴՈՒՐԱՄԻՑԻՆ ( ՄԱԴՈՒՐԱՄԻՑԻՆԻ ԱՄՈՆԻՈՒՄ) 80 ՄԳ/Գ+7,5 ՄԳ/Գ; 20 ԿԳ ՓԱԹԵԹ, 25 ԿԳ ՓԱԹԵԹ, ԴԵՂԱՓՈՇԻ ՆԵՐՔԻՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ «ՌՈԲԻՄՊԵՔՍ 66 (ՌՈԲԵՆԻԴԻՆ) ՌՈԲԵՆԻԴԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ 66 ՄԳ/Գ, 25 ԿԳ ՓԱԹԵԹ, ԴԵՂԱՓՈՇԻ ՆԵՐՔԻՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ» ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշումը, համաձայն «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 15.11.2019 թվականի N 0103155319, բացասական եզրակացությունները՝ Բելգիական «Իպեքստրակո ՆՎ» Վիեկեվորստսես Տենվեգ 38, Բ-2220 Հեիստ-Օպ-Դեն-Բերգ, Բելգիա դեղագործական ընկերության արտադրության «Մնգոռու, Նիկարբազիդ, Մադուրամիցին (Մադուրամիցինի ամոնիում) 80 մգ/գ+7,5 մգ/գ; 20 կգ փաթեթ, 25 կգ փաթեթ, դեղափոշի ներքին ընդունման և «Ռոբիմպեքս 66 (Ռոբենիդին) ռոբենիդինի հիդրոքլորիդ 66 մգ/գ, 25 կգ փաթեթ, դեղափոշի ներքին ընդունման» դեղերի որակի, արդյունավետության և անվտանգության փորձաքննության արդյունքները, հիմք՝ փորձաքննության եզրակացություն N 18909 առ 15.11.2019թ., N 18910 առ 15.11.2019թ. ղեկավարվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 1-ին կետի,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

04.12.19 ժ 10²⁰

1.Մերժել Բելգիական «Իպեքստրակո ՆՎ» Վինկեվորստսես Տեռվեգ 38, Բ-2220 Հեիստ-Օպ-Դեն-Բերգ, Բելգիա դեղագործական ընկերության արտադրության «Մնգոռու, Նիկարբազին, Մադուրամիցին (Մադուրամիցինի ամոնիում) 80 մգ/գ+7,5 մգ/գ; 20 կգ փաթեթ, 25 կգ փաթեթ, դեղափոշի ներքին ընդունման և «Ռոբիմպեքս 66 (Ռոբենիդին) ռոբենիդինի հիդրոքլորիդ 66 մգ/գ, 25 կգ փաթեթ, դեղափոշի ներքին ընդունման» դեղերի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին սույն հրամանը 3-օրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ առաքել հայտատուին:

3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝ 3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի տրամադրումը հայտատուին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի հայտատուին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

/ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

03.12.2019

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157